# ՅՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ԹԱՒՐԻԶԻ

*Ցուցակ ձեռագրաց Ս. Աստուածածին եկեղեցւոյն Ղալայի կամ Բերդաթաղի:*

(Շարունակութիւն:)

## 2.

## ԱՒԵՏԱՐԱՆ

### ՌԼ — 1581.

*ԹՈՒՂԹՔ 267: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21×16×7 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր, երկսիւն՝ իւրաքանչիւրը 12×5,5 սմ.: – ԳԻՐ՝ բոլորգիր. Թանաք՝ սեւ, վերնագրերը, սկզբնատողերն ու սկզբնատառերը կարմիր. տող՝ 21: – ՆԻՒԹ՝ Թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ. առաջին կողին վրայ զամուած են տակէ տակ երկու պղնձեայ խաչելութիւններ եւ չորս կողմը 9 հատ կոճակաձեւ պղնձեայ զարդեր: – ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ սկիզբէն եւ վերջէն երկ-երկու թերթ, անցման երկաթագրով, մնացորդ ճառից Յովհաննու Ոսկեբերանի. «Սարսելի է մահ եւն»: – ՀԱՆԳԱՄԱՆՔ գոհացուցիչ: – ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա, 87ա: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐԸ եւ խորանազարդերը միջակ արուեստով. իսկ էջ 1բ–8բ դրուած 15 տնօրինական մեծադիր պատկերները, էջ 9ա–12ա կամարները եւ վերջապէս աւետարաններու սկիզբը դրուած չորս աւետարանչաց մեծադիր պատկերները աւելի անյաջող են: – ԳՐԻՉ՝ Իսրայէլ երէց. տեղ Որոտեան Ցղուերծ գիւղ. Թուական ՌԼ = 1581. տէր՝ անշուշտ գրիչը:*

Մատեանս է Աւետարան. կը պարունակէ. տնօրինական պատկերներու շարք մը՝ էջ 1բ—8բ. կանոններ՝ էջ 9ա—12ա (սկիզբէն թերթ ինկած). Ցանկ եւ Նախադրութիւն Մատթէոսի՝ էջ 12բ—14ա. Մատթէոս՝ էջ 15ա—85բ. Նախադրութիւն եւ ցանկ Մարկոսի՝ էջ 85բ—86ա. Մարկոս՝ էջ 88ա—132ա. Նախադրութիւն Ղուկասու (չկայ ցանկ)՝ էջ 132ա. Ղուկաս՝ էջ 134ա—208ա. Ցանկ եւ Նախադրութիւն Յովհաննու՝ էջ 208բ—209ա. Յովհաննէս՝ էջ 210ա—265բ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. էջ 6բ—7ա (պատկերներուն տակը). յիշեա... Զ յիսրայէլս նկարող յիշեայ:

Էջ 86բ. Մեծ պարոն այն սուլթանն որ Մուրատ անուն էր. ամսոյ հոռի. ին. աւուրն. ն. շաբաթ, նբ յակոբի պահին. ն. շաբաթ աւուրն. փոխեցաւ առ քն: աղգէն էր փոխակալոյ. Անտի ի Թուր ...ւ Յուց օրինակս գտաւ... ին թվ. ա. իթ. էր:

Էջ 86բ (այլ). Զմեղսօր անարժան եւ սուտանուն աբրայհամս երէցս յիշեցէք աղաւթս ձեր եւ լի բերանով ասացէք. ած ողորմի ասացէք ած ձեզ ողորմի իւր միւս գալըստեանն վայ մեղօորիս. ամէն հայր:

Էջ 132բ. Փառք համագոյ եւ անբաժանելի Ս. երրորդութեն հօր եւ որդւոյ եւ հոգոյն սրբոյ: այժմ եւ յաւիտեանս ամէն: Ես ասկան քահանայ. որդի իմ Թաթէոս քահանէս: գնեցինք սուրբ աւետարանս. ի թվին հայոց: ...էր: ի հալալ ընչից իմոց: ի էշատակ հոգոյ իմոյ եւ անդրանիկ որդիս Թաթէոս քահանէս եւ կողակիցն գալլին: եւ հարսն իմ լալիփաւրին: եւ որդին նորա ընտեփաննոսին. ալէքսանոսին: մաթէոսին. մարկոսին: եւ այլ ամենայն անուանոյն էշողացն եւ կարդացողաց որ

գնեցի ի հալալ ընչէ իմոյ: եւ Տ. Թանկայ: դ: ա: ակ. որ գնած է անխառն եւ անպատճառ: աւաքել: խաւրեմ ն: մրաղէն վկ: կարապետն վկայ. ան վկայ. մելիքսեթ քահանայ. ընտեփաննոս քին: անանիայի քհյնի վկայ: ով որ նղո (= գնա) հանէ: եա եւ աաւջ նզէոլ (= նզովեալ) եղիցի ընտեփանոս արհեպիսկոպոս, միաբան մանուէլ կրօնաւորն: Ներսէս կրօնաւորն: որ աաաջեցին եւ գնեցինք անպատճառ:

Էջ 133ա. Եւս Թաթոս քահանէս ասկան քահի Թոան ներսէս քհն [սաացայ կամ գնեցի] Ս. աւետարանս էշատակ ինձ [եւ ծնողաց իմոց հաւրն] իմ ասկան քհ. [մաւրն իմ] գաւլ[ին եւ կող]ակցին [լալ]իփ [աւրին]. (Յիշատակը չորս կամ հինգ տող պատռած է եւ կը մնան միայն տողերու ծայրերէն քանի մը տառ. կը թուի թէ կը յիշէ «եւ որդոյն իմ սահակին, մաթոսին, յովանէսին եւն»: Յետոյ առացող մը ասոնց անունը ջնջելու համար ասինձով խրարու փակցուցած էր էջ 132բ եւ 133ա. որով այս եւ նախորդ յիշատակութիւնները ծածկուած էին. գժուարութեամբ կրցայ քակել փակցուածը, որուն զահ գացին այն քանի մը պակաս տողերը. իսկ փակագիծներու մէջ գրուածը նախորդ յիշատակութեան զօրութեամբ գրուած է ենթադրաբար):

Էջ 266ա (Գրիչին յիշատակարան). փառք անբաժանելի միաստական Ս. երրորդութեան հաւր եւ որդոյ. Արդ գրեցաւ սուրբ յաւետարանս ի յերկիրս յորոտեան ի գաւղս որ կոչի յղուերծ ընդ հովանեաւ Ս. ծածանիս եւ Ս. ստեփանոսի նախավկայիս եւ այլ սրբոցս որ աստ կան: ի յառաջնորդութեան Ս. յաթոռոյս ընտեփանոս արքեպիսկոպոսի սիւնեաց Տէր ժամ գաւառի. ի թագաւորութեան խուասպանդայի ի թվիս հայոց ռլ. ի ժամանակիս որում երեա ած չորս պատուհասն. ոգի. սուրն. գերութիւնն. մահն. այլ եւ. իշ. առրէն. խարաջն անցեալ էր շահ թահմազն. որդին Նորայ (բառ մը ջնջուած). խիստ ուժգնով ցրուեցաւ յաշխարհս ամէն. բարութիւն կորեան: վասն որ անկելով. ընդէգն: Գրեցաւ ձեռամբ յիսրայէլ երեցոյ հաւրն իմոյ նատարին եւ մաւրն իմ գալուն եւ եղբայրն իմ զաւթին. պաշարաթին. աղաւմին հարանին համգուցեալ եղբաւրն իմ գաւթին կողակցին խոնդաղայն. ով մանկունք Ս. եկեղեցոյ յորժամ հանդէս եւ ընթեռնոյ Ս. յաւետարանս ած ողորմի ասէք վր գրելոցս ած ձեզ ողորմի արքային երկնային ամէն: ն. լ. վ. ա. ր. ն. գ. ե. ը. ո. ը. ո. (վերջինս ծածկագիր մ'է, որ եղբայրագրով կը կարդացուի «յիսրայէլ երեցս»):

Էջ 266բ. Արդ եւ ես յիսրայէլ երէցս առացայ սուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց հաւրն իմ ալթունին եւ մաւրն իմ խանձային եւ եղբաւրն իմ. թոգանին. ախիջանին. աղաջանին. ջանուն պահմանին. պապն նատիրին: կողակցին. հուրիխանի. փուլաղին մուրատին. զատերացն իփակին հարանսրին պակիայն զաւհարի եւ միւան այլ զաւհարի գուլպակուն զատին. եւ քէրն իմ սանամին ասկուն. հաւրքվերն իմ մարիանին անախա... (բառին կէսը քերուած) Ով մանկունք Ս. եկեղեցւոյ յորժամ հանդիպիք Ս. աւետարանիս կարդալով կամ աւրինակելով ած ողորմի ասացէք առացողիս Զ յիսրայէլ երեցիս եւ ծնողացն իմոց եւ ամ յարեան մերձաւորացն ամէն. ի թվ. ա. խե. որ առի Ս. յաւետարանս. ի ժամանակի անօրակ(ալ)ութեան սուրբ աւետարանս բառաթէ յովանէս

digitised by A.R.A.R.@

ողբերգականացն․ ի ազգէն փախուցելոց․ եղբայրորդի սանկտանոս եպիսկոպոսի սրբենեաց ձեռան գաւառի․ Թագաւորութեն Ներոնայ ազգի․ ուղղափառ մահմետականի․ Հռոմայեցի նստեալ ընտանեալ․ ազգին զգեղգաչի Թագաւորն ապագ փախչահին․ Նստեալ ղազվին Թախտի։ (Այս խորայէլ երէցը որդի Աղթունի՝ պէտք չէ շփոթել նախորդ խորայէլ երէցին հետ՝ որդի Նաատրի)։

Էջ 267ա (նոյն գրով)․ փառք ամենայնի երրորդութեան հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբո այժմ միշտ յաւիտեանս ամէն։ Յիշատակ է սուրբ փրկագործ աւետարանս առ ի յիշատակ հոգւոյ իմոյ յիշեցէք զհանգուցեալ խալղալուլին կողակից կուլճահանին որդի պաքարային եղբարք վալճանին աղրհամին տառպարին մելքումին մալումին զաքարին կողակից սիմային որդի խոխանին հարան սանամին քոյր շահպէկին ուղղիանային վառան վալճանին կողակից մարիամին որդի աղամին զաղալին շահնզարին պետրոսին հայրապետին զուկասին աղւհամի կողակից եղոյին որդի ապրէլին յարութիւնին տաապարին կողակից փառուն որդի օվանէսին զամզարին մալքալին (իմա մելքումին) կողակից մարուն որդի կարապետին ով որ անուլէր (բառս խանգարած է, ընթերցումը կասկածելի) քահանայք որժամ կարդայք մի աղորմի տացէք եւ դուք յիշեալ լիցիք քնէ ոյ մերմ․ Հայր (մի ձեզ?) եւ մեզ յիշեցէ ամէն։

## Չ.

*Ցուցակ ձեռագրաց մասնաւոր անձանց:*

## 1.

## ՏԱՂԱՐԱՆ

(1801-էն յետոյ)

*ԹՈՒՂԹՔ՝ արդի վիճակին մէջ 99, բայց ինչպէս պիտի ունենար 216 երեսէ աւելի, որովհետեւ մինչեւ 203 էջ նշանակուած է գոնէ, որմէ յետոյ կու գան վեց չնշանակուած թղթեր: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10×2 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին եւ մաքուր: — ԳԻՐ՝ նօտր, մօտ արդի ձեռագրին. Թանաք սեւ. տող 14: — ՆԻՒԹ՝ Թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական մաքուր. բայց կազմը քրքրուած, պակաս են էջ 1-4, 13-18, 148-9, 154-5, 190-1. 196-9. իսկ 203 էջէն անդին պակաս թերթերու թիւն անյայտ է՝ էջերը չնշանակուելուն պատճառաւ: — ԴԻՏՍՐԿ էջ 206, 211, 214: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԻ՝ չկան. միայն սկզբնատառերը թռչնագիր՝ կարմիր կապոյտ գոյնով: — ԳՐԻՉ, տեղ եւ ժամանակ անծանօթ. թուական չէ նշանակուած, բայց անշուշտ 1801-էն յետոյ որովհետեւ 20րդ երգը Ռուսաց Աղեքսանդր Ա. կայսեր վրայ է: — Ձեռագիրն այժմ սեպհականութիւն է Ղալայի Հայոց դպրոցի ուսուցիչ պր. Վահան Բժշկեանի:*

Ահաւասիկ տաղերուն ցանկը՝ հետեւելով անոնց սկիզբը գրուած թուահամարներուն.

1․ (պատռած)․
2․ (կիսատ) Ոսկի կնդրուկ զմուռ նմա․
3․ Հրեշտակք եւ մարդիկք աստ ցնծացէք․
4․ Ղամբարափայլ որբոյ տօնիս, ալ իտիս․
5–7․ (պատռած)․
8․ Հրճուիմք այսօր մեք հոգեպէս,
9․ Ծաղիկ պայծառ ծովային․
10․ Բանն Աստուծոյ առաքեցաւ,
11․ Ով զարմանալի խորհուրդս․
12․ Այսօր ձայնն հայրական․
13․ Քեզ փառաց Թագաւոր․
14․ Իսկականքդ ծնունդ անեղ․
15․ Ի հօգւոյն նիւթոյս ոսկի․
16․ Եկ սիրելի ի պարտէզ․
17․ Քեզ կոյս անբիծ եւ գերամբիծ․
18․ Այ գեղեցիկ ազնիւ Թաչուն․
19․ Վերատապեսք առ Ած․
20․ Պետութեամբ եւ ինքնակալ (Ռուսաց Աղեքսանդր Ա․ կայսեր վրայ երգ)․
21․ Յորժամ եղեւ գարուն․
22․ Ի փշալից ծառոց աւելալ․
23․ Սիմէոնի առն Աստուծոյ,
24․ Միաշաբաթ օր հանգստեան․
25․ Զիս քո սիրոյն ով նազելի․
26․ Արի սէր իմ արի արի․
27․ Վերաւորեցայ մեղօք վարեցայ․
28․ Գարունն է բացվեր վարդն․
29․ Եկեալ մարիամ մագդաղենացին․
30․ Իժն եղեռնային օձն ժանգական։
31․ Փառաց անեղի փափաքելեաց․
32․ Բարի եկիր իմ պատուական․
33․ Սեաւ եմ գեղեցիկ դուստր Երուսաղէմի․
34․ Յարմար ձեւով պատուական․
35․ Նստիմք ի մէջլիս հարք եւ եղբարք․
36․ Եմ սեւացեալ տեսուք սեաւ եմ․
37․ Ահա մեք ժողովեալքս․
38․ Երեք որ երթամք պիւլպիւլն երանք․
39․ Արդ լուսաւորեա, արդ փառաւորեա․
40․ Ամ որ սիրեցէ զքեզ․
41․ Այսօր ցնծայ լեառն Թաբոր․
42․ Անճառելին խորան բանին բնակարան․
43․ Արի իմ քաղցրիկ աղաւնի․
44․ Ամենից քարոզ ով նո մարգարէս․
45․ Ածածին ամենօրհնեալ գոչեմք․
46․ Ով պարադիզական ծառ ուր տարան․
47․ Ով քեզ նման ամենազօրութ․
48․ Որ արարեր զիս ի պատկեր․
49․ Յայտնւյն միաշաբաթին իւղաբերքն․
50․ Իւղաբերքն գան ի գերեզման․
51․ Ի բարձունս երկնից յարեւելս․
52․ Ի կենաց նախկին վայելմանց․
53․ Ի մեծ տագնապ՝ անձն իմ․
54․ Դարձեալ յայտնի այլանման․
55․ Մարիամու մագդաղենի ցուցաւ,
56․ Գլխոյ պսակ զարմանալի․
57․ Սարատփելի բարկութեն (Երգ Տփղիսի վրայ)․
58․ Մաչորեցաւ միտն իմ մեղօք․
59․ Սահման անսահման խորոց․
60․ Յաւուր միում որ էր մեզ նոր կիւրակէ․
61․ Գերեզկելի օղբալի ո՛հ․
62․ Սարեկայ ծառոյն նշանեցաւ,
63․ Մայր ցանկալի չքնաղի․
64․ Խաչն ի նախնումն երեւեցաւ,
65․ Ի խաչին անարգ բեւեռեալ․
66․ Փութայ առ մեզ նաւչուն կաչհաւ․
67․ …դուստր իմաստուն մօրն Երուայի (կիսատ)․
68․ Անեղին տաճար բանին․
69․ Գոչէր հրեշտակն առ վիմին․
70․ Մարտն կուգայր ծաղկունքներով,

71. Ղարիպին կեանքն է լալի.
72. Յարուցեալ յերրորդ աւուր.
73. Այսօր Նոր արեւ հարեալ.
74. Սուրբ մայրդ լուսոյ.
75. Մեծահանդէս է օր տօնի.
76. Պաշտելի տօնելի դաս Ս. Գրիգորի.
77. Կանայք եմ քոյրք իմ սիրական.
78. Դրախտն հրեական էին պահապան.
79. Կանանցն կանխեալ եկին.
80. Արեք ելլուք ի միասին.
81. Էջմիածին կաթուղիկէ Նորայս.
82. Ձորեղ փչումն ուժգին հողմոյ.
83. Երկիրս ամէն կանաչեցաւ.
84. Ի տարանջատ վայրեր.
85. ...էին անդ բազում պահապանք.
86. Մարիամ մագդաղենին փարէր.
87. Այսօր ցնծալի այսօր զուարճալի.
88. ...Նորին Նորոյ եւ համազամ.
89. Թագ փառաց մերոց.
90. Փառք քեզ Քն որ հառուցեր.

77-էն յետոյ տաղերը թուահամար չունին, ուստի պակասները յայտնի չեն. սկսեալ 88-էն՝ բոլորովին նոր ձեռագրով՝ օտար գրչէ. վերջին երեք թղթերը կը պարունակեն 1870 թուէն նամակ մը, Յովսէփ Գէորգեան ստորագրութեամբ, տաղերու ցանկէն մնացորդ մը. եւ գրչափորձեր, հայերէն, ռուսերէն, վրացերէն, պարսկերէն։ Կան եւ վերջին սպասողներու ստորագրութիւնները. "Եղբարք նոզարեաններ գրքերից թուրքիղ 96 ակչու. 20„, "Ի հազար ութ հարիւր յիսուն վեց ամին ապրելի տառ ամիսին ի Թէհրան„, "Ի հազար ութ հարիւր եօթանասուն մէկ ամի սեպտեմբերի 15ին ի քաղաքն Դուշէթ„, ստորագրեալ ռուսերէն Աբրահամ Գէորգեան։

## 2.

## ՏԱՂԱՐԱՆ

(1819-էն յետոյ)

*ԹՈՒՂԹՔ՝ արդի վիճակին մէջ 78, էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16.5×10.5×1,5 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: — ԳԻՐ՝ նօտր. Թանաք՝ սեւ, տող՝ 19-25: — ՆԻՒԹ՝ մաս մը սպիտակ, մաս մըն ալ կապոյտ հաստաբակ անողորկ թուղթ: — ԿԱԶՄ՝ նախապէս թղթակազմ. այժմ քայքայուած, անկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ թափթփած, բաւական կեղտոտ եւ պատառոտուն: Սկիզբէն, մէջերէն եւ վերջէն պակասներ կան. նախկին դատարկ էջերը լցուած են գրչափորձերով եւ անմիտ խազմզոցներով. նամակներով եւ հաշիւներով, նոյնպէս եւ առեւտրական ու այլ պայմանագրերով: — ԳՐԻՉ, տեղ եւն անծանօթ: — Ձեռագիրն այժմ սեփականութիւնն է Ղալայի Հայոց վարժարանի ուսուցիչ Պր. Վահան Բժշկեանի:*

Ձեռագրիս բովանդակութիւնն է.

1. Տաղ. ի ծփանաց մեղաց ծովուս.
2. Ի քէն հայցեմ ով տէր յն.
3. Կցուրդ Բիր չուլթ նա եէնդի (օտար գրչէ).
4. (կիսատ) տաղ. Գլորեալց կանգնիչ սիւն հաստատուն ես.
5. Ի ծփանաց մեղաց ծովուս. (նոյն ընդ 1).
6. Ի քէն հայցեմ ով տէր յն. (նոյն ընդ 2).
7. Աւաղալի ողբս եմ ես ի սանես առաքելան.
8. Յորժամ էիր դու եօթնամեայ.
9. Շընհարըպտայ չալընըր նէչայ քիլիսալարի.
10. Աղբիւր անապական. բանին բնակարան.
11. Աւաղ կարդամ անձինս մեղայ գոչեմ (նոյն ընդ 4).
12. Ի մէջ անհուն մեղաց կամ ես գեգերեալ.
13. Ի սէր աշխարհիս պատրեցայ միշտ.
14. Ի քէն հայցեմք ով սիրածին.
15. Մեծամեծ պարգեւաց ես ակն ունէի.
16. Եսանձեայ անեղին շնորհօքն զօրացեալ.
17. Մենամարտ եւ սպառազէն երեւեցար.
18. Մրցանակ ցեղէն կոչեցեալ.
19. Ի ծովածուփ սուտ կենցաղոյս.
20. Ի մուտ մայր միջի գարնան.
21. Ի գալ գարնան ցնծան արարածք.
22. Նամակներու օրինակներ (9 թերթ).
23. (կիսատ) տէր յն աղերսեմ, միշտ յարաժամ.
24. Ի քէն հայցեմ ով տէր յն (նոյն ընդ 2).

Նոյնպէս եւ թիւ 25—33 նոյն ընդ 12—21: պակաս է միայն թիւ 19.

34. Իսկ ի գարնան աւուրք եղեւ մեզ յայտնի.
35. Ի ազատ ցեղէ շառաւեղեալ տնկալի.
36. Ի հարաւ կողման հողմոյն.
37. Իսկակից հօր ծնունդ անեղ.
38. Հողմքն մեղաց զիս տատանեն սաստկապէս.
39. Անէկ թայ բաղի ալ ալամ (թրք.)
40. Սիրամարգից սիրովն եղէ սիրահար (կիսատ).
41. Ի հազար երկու հարիւր վաթսուն ութ ամաց[1] եւ
42. Զիմիստան միւխլի տխրը զամանայ (15 թերթ պատմական ոտանաւոր վանայ արկածներուն վրայ հայերէն եւ թուրքերէն դիմացէ դիմաց).
43. Ոտանաւոր Յարութիւն կարնեցի նահատակին.
44. Հավալամայ թելի գուանում ուչար կետար.
45—54. Թուրքերէն երգեր.
55. Հրեշտակապետաւ վանքն պէսպէս շնորհիւ.
56. Նիճէ Էւօկսէմ նը յարութի.

## 3.

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ՀՈԳԻՈՅ ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԻՆ

?

*ԹՈՒՂԹՔ 244 (նշանակուած 243, բայց փախցուած է 188): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12,5×10×3,5 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին, մաքուր եւ կանոնաւոր: — ԳԻՐ՝ մանր բոլորգիր. Թանաք՝ սեւ. վերնագրեր եւն կարմիր. տող՝ 20: — ՆԻՒԹ՝ թուղթ. սկիզբէն դրուած է երկու թերթ մագաղաթեայ պահպանակ գոթացերէն գրութեամբ. վերջէն նոյնպէս երկու թերթ մագաղաթ՝ միջին-մեսրոպեան գրով աւետարանի մը մնացորդ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտէ՝ զարդարուն երեսով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ մաքուր: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա-2բ, 136բ, 241բ—243բ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ մէկ-երկու հատ միայն. էջ 3ա, 78ա, 135ա երեք գեղեցիկ նրբանըկար խորաններ: — ԳՐԻՉ՝ Վրդանէս. տեղ եւ թուական անծանօթ: Ձեռագիրն այժմ սեփականութիւնն է Պր. Տիգրան Մելիք-Ջոհրաբեանի:*

Մատեանս կը պարունակէ. էջ 3ա—77բ Համառօտ հաւաքումն հոգւոյ եւ զօրութեանց նորին. Ասէ Արիստոտէլ ի գիրս հոգեաց թէ հա-

[1] Այս երգին թուականը կը ցուցնէ թէ Տաղարանը գրուած է 1819-էն յետոյ։

digitised by A.R.A.R.@

դին կերպիւ ինչ է.... էջ 77բ—134բ Յաղագս առաքինութեանց հոգւոյն. Յետ առնելոյ յէութենէ հոգւոյն եւ ի զօրութեանց նորին.... էջ 135ա—241ա Համառօտ հաւաքումն յաղագս հրեշտակաց. Ասէ երանելին Դիոնէսիոս....

Յիշատակարաններ. Էջ 78բ. փառք քեզ քաղցրիկ որ իմ փառք քեզ:

Էջ 79բ. լուսանցքի վրայ կնիք մը՝ տաճկերէն լեզուով եւ ولي մակագրութեամբ:

Էջ 134բ. կատարեցաւ գիրքս որ յաղագս հոգւոյ զօրութեանց նորին:

Էջ 136ա. Փառք քեզ գթած անոխակալ. հայրախնամ ամենիշխող. (Գ)ոյից սող"ծիչ անզօղ կատար. բոլոր սեռից համագումար: (Ք)աղցրիկ փրկիչ իմ բարեր(ար) անեօղ մտաց ինձ խաւար. (Գ)ըթով սիրոյ քո մայրաբար. նոպատ եղեր ծրողիս ախմար:

Էջ 210ա. գծրօղս յիշեսջիք:

Գլխաւոր յիշատակարան (էջ 241ա). Յաւարտ հասանել առփեստս հոգեաց լառինարան: Ի վրդանէս ատենուամբ յանձնայն հոգով անարժան. ձեզ աղաչեմ հանդիպող տարս զիս յիշեա եւ տաս մի ողորմի հոգւոյ նիս:

Բոլորն ալ առաջին եւ բուն գրչէն են:

## 4.

## ԳԻՐՔ ՊԻՏՈՅԻՑ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՑ (ՌՃԺԷ = 1668.)

*ԹՈՒՂԹՔ 377. էջ 754: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19×13×5 սմ.: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակէ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ նոր եւ մաքուր: — Մագաղաթեայ պահպանակներ սկիզբէն եւ վերջէն երկ-երկու թերթ՝ երկաթագիր աւետարանի մնացորդ: Դատարկ թուղթ 1, 218 եւ 377: — Ձեռագիրն այժմ սեփականութիւնն է Պր. Տիգրան Մելիք-Ջոհրաբեանի:*

Ձեռագիրը բաղկացած է երեք տարբեր գրքերէ.

*Ա. ԳԻՐՔ ՊԻՏՈՅԻՑ. — ԹՈՒՂԹՔ 1–218: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր, միասիւն: — ԳԻՐ՝ նօտր. թանաք՝ սեւ. տող՝ 22: — ՆԻՒԹ՝ ողորկ եւ փայլուն բամբակեայ թուղթ: — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴԵՐ մի քանի հատ միայն. վերնագրերը կարմիր. էջ 2ա՝ մէկ խորան միջակ արուեստով: — ԳՐԻՉ Սիմէօն քահանայ: — ԹՈՒԱԿԱՆ ՌՃԺԷ = 1668:*

Մատեանս է Գիրք պիտոյից. բայց խորագրի տեղը բաց է թողուած. ուր յետին գրիչ մը կը դնէ "Գիրք ճարտասանութիւն„: Յիշատակութիւններ չկան. էջ 217բ՝ գրքին վերջը կայ միայն հետեւեալ յիշատակարանը, "Գծագրեցաւ գիրքս ճարտասանութեան որ է արարեալ մեծի քերթողահօրն. Մովսէսի Խորենացւոյ. ձեռամբ անարհեստ եւ խաւարամած ոգւոյ. սիմէոնի լոկ անուամբ ուեթ քհի, ի թուին հայոց ռ. ճ. ժ. եւ է. ամէն: ով որ հանդիպէք յիշեցէք զիս ի քս„

*Բ. ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՑԱՐՁԱԿ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆՑՆ ԱՅՍԻՆՔՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍՏՈՐՈԳԵԼԵԱՑՆ: — ԹՈՒՂԹՔ 219ա–349բ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն եւ բաւական մաքուր: — ԳԻՐ՝ բոլորգիր. թանաք՝ սեւ. տող 23: — ՆԻՒԹ՝ աւելի հաստ եւ նուազ ողորկ թուղթ քան նախորդը: — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴՔ սակաւաթիւ. վերնագրերը կարմիր. խորան եւ ճակատազարդք չկան: — ԳՐԻՉ եւն անծանօթ:*

Լուսանցագրութիւն յետին գրչէ՝ միայն էջ 323ա. "անիծեալ լինի ժողովն այն եւ պիղծն մարկիանոս չար թղթովն. որ այնքան սբ. քրիստոնեայք. որով անցօղ եւ ինքն չրաշր վերջացաւ այժմ պատպանձիր այլ մի գրել տուաւ. եղկելի թշուառ հոգի. այր հերձուածող եւ ոչ բարի„:

Տառներորդ "Յաղագս հրեշտակաց„ վիճաբանութենէն յետոյ՝ էջ 349բ. "բաւէ յաղագս հրեշտակաց„ ըսելով կը փակուի գլուխը. եւ յաջորդ էջով կը սկսի՝

*Գ. ՅԱՂԱԳՍ ԾՐԿՆԱՑԻՆ ՄԱՐՄՆՈՅ (որ է Աստղաբաշխութիւն՝ նոր գիտնական ծանօթութիւններով եւ արաբական թուանշաններով), էջ 350–376բ: — — ԳՐՈՒԹԻՒՆ՝ նման նախորդին: — ԳԻՐ՝ բոլորգիր. թանաք՝ սեւ. տող 25: — ՆԻՒԹ՝ դեռ աւելի հաստ թուղթ քան երկրորդը: — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴ եւն չկայ. վերնագրերը սեւ. միայն սկզբնատառերը կարմիր: — ԳՐԻՉ եւն անծանօթ: Յիշատակարան եւն չկայ. միայն գրքի վերջը էջ 376բ "օհնէ տր իմ յս. որ այց արար եղկելոյս„. Խաչիկ վարդապետի Ձեռագրաց Ցուցակին մէջ, էջ 51 կը յիշուի թէ վերջին մասը Ստեփաննոս Լեհացւոյն թարգմանութիւնն է:*

(Շարունակելի.) Հ. Ց. ԱՃԱՌԵԱՆ

## ՄԽԻԹԱՐ ԳՕՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

*(Ուսումնասիրութեան փորձ):*

### ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### ԳԼՈՒԽ Ա.

### Նախաբան.

### I.

Հայկական իրաւունքի պատմութեան մէջ նշանաւոր տեղ է բռնում "Մխիթարայ Գօշի Դատաստանագիրքն Հայոց„: Այս դատաստանագիրքը բազմաթիւ ձեռագրներով ու վարիանտներով ցրուած է զանազան գրադարաններում, որոնց մէջ գլխաւորապէս յայտնի են Ս. Էջմիածնի եւ Վենետկի Ս. Ղազարի դատաստանագիրք-ձեռագրները: Մխիթար Գօշի անունով յայտնի ձեռագրները մեծ մասամբ միացած են ուրիշ մասերի հետ, որոնք բաղկացած են բացառապէս օտար օրէնքներից՝ մովսիսական, յունական եւ այլն: Օրէնքների այդ ժողովածուները աչքի են ընկնում մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ. ա) Նախադրութիւն. բ) Եկեղեցական կանոնք — 125 յօդուած. գ) Աշխարհական օրէնք — 130 յօդ.: դ) Մովսիսական օրէնք — 67 յօդ.: ե. Ասորա-Հռովմէական օրէնքներ — 152 յօդ.: զ) Յունական

digitised by A.R.A.R.@